49 ЧЕМПИОНАТ СССР по ФУТБОЛУ
ВЫСШАЯ ЛИГА
„АРАРАТ“ (Ереван) — „СПАРТАК“ (Москва)

«ՀՐԱԶԴԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍՏԱԴԻՈՆ
ЦЕНТРАЛЬНЫИ СТАДИОН „РАЗДАН“

№ 11 (246)

1986



# ՖՈՒՏԲՈԼ

ՍՍՀՄ 49-րդ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

ՀՈՒՆԻՍԻ 28 ИЮНЯ
ՇԱԲԱԹ СУББОТА

«ԱՐԱՐԱՏ» — «ՍՊԱՐՏԱԿ»
(ԵՐԵՎԱՆ) (ՄՈՍԿՎԱ)

ԽԱՂԻ ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19-ԻՆ
НАЧАЛО ИГРЫ В 19 ЧАС

footballprogs.net

# ԱՎԱՐՏԵԼՈՎ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԽԱՂԵՐԸ

Գարնան առաջին օրը մեկնարկեց ֆուտբոլի համամիութենական առաջնությունը, և ահա այժմ այդ տևական մրցումները մոտեցել են հասարակածին։ Այսպիսով, եկել է ժամանակը, երբ պետք է ամփոփվեն երկրի առաջնության առաջին կեսում մրցակից թիմերի ունեցած ելույթների արդյունքները։ Ճիշտ է, ոչ բոլոր ակումբներն են ավարտում առաջին շրջանի խաղերը։ Խոսքն առաջին հերթին Կիևի «Դինամոյի» մասին է, որին հարկ կլինի մեծ թվով հետաձգված հանդիպումներ անցկացնել՝ մյուսներին հավասարվելու համար։

Եվ, այնուամենայնիվ, կարելի է որոշ եզրահանգումներ անել։ Նախ, հարկ է նշել, որ այս մրցաշրջանն առայժմ աչքի չի ընկնում գրոհների արդյունավետությամբ։ Ըստ երևույթին, պաշտպանական գոտում հանդես եկող խաղացողները գտել են գրոհները կասեցնելու, սպառնալիքները խափանելու հատուկ միջոցներ։ Բայց, մյուս կողմից, սա պետք է բացատրել գրոհողների ստեղծագործական համարձակ գործողությունների պակասով, կոշտ պայքարից խուսափելով։ Սա, անշուշտ, վերաբերում է նաև «Արարատի» ֆուտբոլիստներին, որոնց գրոհային խաղի օգտակար գործողության գործակիցը չափազանց ցածր է։ Այստեղից էլ թանկարժեք միավորների կորուստներ, այստեղից էլ՝ նահանջ։ Ինչ խոսք, դրությունն անպայման պետք է շտկել։

Սովորաբար հարազատ հարկի տակ թիմերն ավելի եռանդով, ավելի վստահ են գործում, ձգտելով շեշտը դնել անընդհատ ու սուր գրոհների վրա։

Երկրորդ շրջանում մեր ֆուտբոլիստները ավելի շատ խաղեր կանցկացնեն «Հրազդանում»։ Ուրեմն հույս կա, որ նրանք կձգտեն ամեն ինչ անելու դրությունը կարգավորելու համար։ Մանավանդ որ մեկ-երկու հաջող խաղի դեպքում արդեն հնարավոր է նկատելիորեն վեր բարձրանալ մրցաշարային աղյուսակի աստիճաններով։

Վերջին խաղերը ցույց են տվել, որ «Արարատի» ֆուտբոլիստների ֆունկցիոնալ կարողությունները բարելավվել են։ Նրանք ունակ են գործելու բարձր արագությամբ, ցուցադրելու տեմպային ու մտածված խաղ։

Այո, տղաները աստիճանաբար ձեռք են բերում անհրաժեշտ մարզավիճակ։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ կոլեկտիվը ամեն ինչ կներդնի տարվա գլխավոր առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար։

Երկրի առաջնության կես ճանապարհը թիմերն անցան։ Սկսվում է տևական մարաթոնի երկրորդ կեսը, և հարկ է այնպես անել, որպեսզի մեր թիմի մարտունակությունը ավելի ամրապնդվի, որպեսզի առավել ծանր ու որոշիչ խաղերը արարատցիներն անցկացնեն ամենաբարձր մակարդակով։

# ՏՈՒՐԻ ԶՈՒՅԳԵՐԸ

Առաջին շրջանի ավարտական խաղերը որոշակի պարզություն կմտցնեն մրցաշարային աղյուսակում։ Այդ պատճառով, կասկածից վեր է, որ տուրի բոլոր խաղերը կանցնեն մարտական անհաշտ պայքարում։

Ահա թե որ մրցամարտերը տեղի կունենան այսօր.

«Արարատ» — «Սպարտակ»

«Նեֆթչի» — «Դինամո» Մ.

«Դինամո» Թ. — «Դնեպր»

«Տորպեդո» Մ. — «Զենիթ»

«Դինամո» Մն. — «Մետալիստ»

«Դինամո» Կ. — «Շախտյոր»

«Տորպեդո» Ք. — «Չերնոմորեց»

«Կայրաթ» — «Ժալգիրիս»

ՍՍՀՄ ԳԱՎԱԹԻ ՀԱՄԱՐ

# ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԸ ՊԱԿԱՍՈՒՄ ԵՆ

Բյուրեղապակյա պարգևի համար մրցավեճն աստիճանաբար թեժանում է, դառնում ավելի սուր ու գրավիչ։ Եվ դա հասկանալի է, չէ որ ասպարեզում մնում են առավել ուժեղ, հիրավի, ռեալ հավակնորդները, որոնք ամենալուրջ մտադրություններ ունեն։

1/16 եզրափակիչ խաղերը այդ բանը հաստատեցին. ավելի շատ հաջողությունների հասան ավագ՝ բարձրագույն խմբի թիմերը։ Ճիշտ է, պետք է խոստովանել, որոշ հանդիպումներում, առավելության հասնելու համար, նրանց հարկ եղավ դրսևորել իրենց լրիվ ունակությունները, ամբողջ կամքն ու վճռականությունը։

Ցավալի է, որ այդ տարի նույնպես մեր հանրապետության թիմերը չկարողացան դրսևորել իրենց բարձր վարպետությունը, բարոյակամային անհրաժեշտ հատկանիշներ։ Այդ պատճառով էլ Աբովյանի «Կոտայքը» Մինսկում տանուլ տվեց «Դինամոյին», իսկ «Արարատը» Լվովում՝ ԲՄԱ «Կարպատներին»։

Եվ այսպես, պայքարը պատվավոր մրցանակի համար շարունակվում է։ Առջևում 1/8 եզրափակիչի հանդիպումներն են, որոնք, անտարակույս, կանցնեն անհամեմատ ավելի սուր ու անհաշտ մրցակցության մթնոլորտում։

Հիշեցնենք, որ գավաթակիր թիմն իրավունք կստանա աշնանը մեր երկիրը ներկայացնելու եվրոպական երկրների գավաթակիրների գավաթի խաղարկությունում։

footballprogs.net

ЗНАКОМЬТЕСЬ: НАШИ ГОСТИ

## БУДЕТ ЛИ ПЕРЕЛОМ ?

Вряд ли найдется у нас любитель футбола, который не знал бы о славном пути, пройденном столичным «Спартаком». Ведь это — самый популярный клуб со своим почерком игры, чисто спартаковским духом ведения соперничества. К тому же «Спартак» — самый титулованный у нас в стране клуб. Достаточно сказать, что вот уже семь сезонов команда выступает исключительно стабильно, постоянно занимая место в числе призеров. Но сегодня многие недвусмысленно задают вопрос — будет ли продолжена эта традиция?

Да, как это не удивительно, пока наши гости не блещут высокой результативностью. Правда, недавно принимая торпедовцев Кутаиси, спартаковцы одержали более чем убедительную победу, забив пять «сухих» мячей. Но известно и то, что до этого в 9 проведенных играх они забили всего 10 мячей. Что и говорить, так мало давно не забивал этот клуб.

Чем же вызвано такое положение? Конечно же, резким изменением состава. Ведь команду покинули такие знаменитые мастера, как Гаврилов, Шавло, Сочнов. А что же новобранцы, среди которых и опытные, и молодые футболисты? На этот вопрос старший тренер команды К. Бесков отвечает так:

— Мы рассчитывали, что они будут в состоянии — пусть не сразу — претворить тренерские замыслы в реальность. Однако, когда наступил черед серьезных испытаний, обнаружилось, что в технической оснащенности, в видении поля, в умении верно сориентироваться даже в простой игровой ситуации у дебютантов нашей команды заметны пробелы. Эти пробелы в их футбольном образовании и мешают им сыграть на том уровне, который обеспечивал «Спартаку» постоянное место в числе призеров чемпионата...

И все же верится, что «Спартак» преодолеет трудности, сумеет внести перелом в своей игре и обязательно займет достойное место в числе лидеров чемпионата страны. Впрочем, ощутимые сдвиги в этом направлении уже сделаны. К тому же основные события впереди: чемпионат только-только подошел к экватору.

ДЛЯ ЛЮБИТЕЛЕЙ СТАТИСТИКИ

## ГОДЫ И ГОЛЫ

В двух последних играх сегодняшних соперников, состоявшихся весной прошлого года в Ереване, а затем — поздним летом — в Москве, не был забит ни один мяч. Но в 46 встречах, состоявшихся по сей день, было зафиксировано немало голов — 57 раз ворота поражали спартаковцы, 40 — араратовцы. И по числу побед перевес на стороне москвичей: они эту радость праздновали 20 раз, ереванцы — 12.

Сегодня футболисты «Спартака» и «Арарата» проведут между собой 47-ой поединок.

Вот результаты всех состоявшихся встреч «АРАРАТ» — «СПАРТАК»:

1949 г. — 2:2, 1:2
1950 г. — 0:4, 2:1
1960 г. — 0:4, 4:1
1961 г. — 0:0, 1:0
1963 г. — 0:3, 0:1
1966 г. — 0:0, 1:0
1967 г. — 0:1, 0:1
1968 г. — 1:1, 1:3
1970 г. — 1:1, 1:1
1971 г. — 0:0, 1:1
1972 г. — 1:0, 1:1
1973 г. — 2:2, 3:1
1974 г. — 0:1, 2:0
1975 г. — 0:0, 2:1
1976 г. — 0:1, 2:3
1978 г. — 0:3, 1:0
1979 г. — 0:1, 2:0
1980 г. — 0:1, 2:0
1981 г. — 0:3, 1:2
1982 г. — 1:1, 2:1
1983 г. — 1:3, 0:1
1984 г. — 0:2, 1:2
1985 г. — 0:0, 0:0
1986 г.

footballprogs.net

## ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ
## СОСТАВЫ КОМАНД

### «ՍՊԱՐՏԱԿ» — «СПАРТАК»

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մկսվ Դասաև Ռինատ | 1957 | 227 | — | мсмк | Дасаев Ринат |
| սվ Կուզնեցով Բորիս | 1957 | 196 | 1 | мс | Кузнецов Борис |
| մկսվ Խիդիատուլին Վագիզ | 1959 | 131 | 10 | мсмк | Хидиятуллин Вагиз |
| Կայումով Ալմիր | 1964 | 21 | — | | Каюмов Альмир |
| Վոլգին Սերգեյ | 1960 | 77 | 17 | | Волгин Сергей |
| մկսվ Սուսլոպարով Յուրի | 1958 | 154 | 20 | мсмк | Суслопаров Юрий |
| սվ Կուզնեցով Եվգենի | 1961 | 127 | 17 | мс | Кузнецов Евгений |
| սվ Նովիկով Սերգեյ | 1961 | 40 | 9 | мс | Новиков Сергей |
| սվ Ռուդակով Ալեքսանդր | 1961 | 31 | 12 | мс | Рудаков Александр |
| սվ Լատիշ Նիկոլայ | 1955 | 163 | 31 | мс | Латыш Николай |
| սվ Իվանով Իգոր | 1960 | 105 | 2 | мс | Иванов Игорь |
| սվ Կապուստին Վիկտոր | 1960 | 53 | 6 | мс | Капустин Виктор |
| մկսվ Չերենկով Ֆյոդոր | 1959 | 234 | 57 | мсмк | Черенков Федор |
| սվ Կուժլև Օլեգ | 1966 | 14 | — | мс | Кужлев Олег |
| Ռուսյաև Միխայիլ | 1964 | 24 | 3 | | Русяев Михаил |

*Թիմի պետ՝ սվվ.* Ն. Ստարոստին, *Ավագ մարզիչ՝ սվվ. ՍՍՀՄ վաստ. մարզիչ՝* Կ. Բեսկով, *Մարզիչներ՝ սվ., ՌՍՖՍՀ վաստ. մարզիչ՝* Ֆ. Նովիկով, *սվ., ՌՍՖՍՀ վաստ. մարզիչ* Պ. Շուբին:

Начальник команды — змс **Н. Старостин.** Старший тренер — змс, зтр СССР **К. Бесков.** Тренеры — мс, зтр РСФСР **Ф. Новиков**, мс, зтр РСФСР **П. Шубин.**

### «ԱՐԱՐԱՏ» — «АРАРАТ»

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սուքիասյան Սլավա | 1965 | 19 | — | | Сукиасян Слава |
| Պոդշիվալով Ալեքսանդր | 1964 | 62 | — | | Подшивалов Александр |
| սվ Կիրակոսյան Հովհաննես | 1956 | 153 | 7 | мс | Киракосян Ованес |
| Սարգսյան Ալբերտ | 1963 | 91 | 5 | | Саркисян Альберт |
| մկսվ Խաչատրյան Աշոտ | 1959 | 229 | 4 | мсмк | Хачатрян Ашот |
| Միրզոյան Արթուր | 1966 | 19 | — | | Мирзоян Артур |
| Մարգարյան Մկրտիչ | 1959 | 100 | 2 | | Маркарян Мкртыч |
| սվ Գալստյան Պողոս | 1961 | 69 | 10 | мс | Галстян Погос |
| սվ Գալստյան Ռաֆայել | 1956 | 155 | 12 | мс | Галстян Рафаел |
| սվ Գալստյան Ռոբերտ | 1958 | 155 | 8 | мс | Галстян Роберт |
| Կարապետյան Գևորգ | 1963 | 46 | 1 | | Карапетян Геворк |
| Չիլինգարյան Արսեն | 1962 | 48 | 2 | | Чилингарян Арсен |
| Պողոսյան Հովհաննես | 1967 | 26 | 2 | | Погосян Ованес |
| Քոչարյան Ռոբերտ | 1963 | 34 | 11 | | Кочарян Роберт |
| Մխիթարյան Համլետ | 1962 | 136 | 40 | | Мхитарян Гамлет |

*Թիմի պետ՝* Մ. Գալոյան: *Ավագ մարզիչ՝ ՀՍՍՀ վաստակավոր մարզիչ* Լ. Զախարով: *Մարզիչներ՝ սվ* Հ. Մանթարլյան, Ս. Դարբինյան:

Начальник команды — **М. Галоян.** Старший тренер — зтр Арм. ССР **Л. Захаров.** Тренеры — мс **О. Мантарлян, С. Дарбинян.**

Игру судит судья Республиканской категории **Ю. Миляускас** (Алитус). Ему помогают судья Всесоюзной категории **Е. Александров** (Ярославль) и судья Республиканской категории **А. Горинас** (Бирштонас).

Составитель и ответственный за выпуск **М. Назарян.**
ВФ 07353. Заказ 636. Тираж 3500. Цена (с календарем игр второго круга) — 18 коп.
Типография № 2, г. Ереван, ул. Теряна, 44.